ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 01

Հայաստանի Հնարապետության Արագածոտնի մարզպետարանում **21.02.2012թ.** տեղի ունեցած մարզխորհրդի նիստի

Մասնակցում էին՝

Ս.Սահակյան ՀՀ Արագածոտնի մարզպետ
Ա.Արսենյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Մ.Առաքելյան ՀՀ Արագածոտնի մարզպետի տեղակալ
Հ.Գևորգյան ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի ղեկավար
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներ
ՀՀ Արագածոտնի մարզի համայնքների ղեկավարներ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. 2012 թվականի համայնքների բյուջեների կազմման գործընթացի մասին
/զեկ.՝ Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ/:

2. Մարզի հողօգտագործողներին տրամադրված գարնանացան գարու և եգիպտացորենի գումարների հետ վերադարձման ապահովման և պետական ծրագրերի շրջանակում մատչելի գներով ազոտական պարարտանյութ և դիզելային վառելիք տրամադրելու մասին
/զեկ.՝գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆ/:

3. Համայնքային սեփականության հողերի վարձակալության տրամադրման իրավական գործընթացի մասին
/զեկ՝. Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆ/:

4. Մայիսի 9-ին և մայիսի 28-ին մարզում իրականացվելիք մարզային մեծ միջոցառումների կազմակերպման և պատշաճ անցկացման մասին
/մարզպետ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ/

5. Մարզի 12 համայնքներում համայնքային կառավարման տեղեկատվական համակարգի ներդրման գործընթացի մասին
/զեկ. ՏԻՄ վարչության պետ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆ/:

6.Այլ հարցեր և հայտարարություններ:
Կից՝զեկուցողների զեկուցագրերը:

Մարզպետ՝ Ս. ՍԱՀԱԿՅԱՆ

--- Տեղեկացրեց որ մարզային մեծ միջոցառումներ են կազմակերպվելու մայիսի 9-ին և մայիսի 29-ի տոնակատարությունների կապակցությամբ, և դրանցում իրենց մասնակցությունն են ունենալու համայնքները:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝

1.Մարզպետարանի աշխատակազմի մշակույթի և սպորտի բաժնի պետ՝Ա.Սահակյան

---Հանրային հեռուստաընկերության <<Իմ տաղանդավոր ընտանիքը>> հեռուստանախագծի մարզային փուլը պատշաճ կազմակերպելու վերաբերյալ:

2.Աշտարակի զինվորական կոմիսարի տեղակալ՝ Ա.Հակոբյան

--- Պահեստազորայինների ազատ ռեսուրսների հետ մեկօրյա պարապմունքներ անցկացնելու մասին:

3. **<<Մաքուր էներգիա և ջուր>>** միջազգային առաջադեմ փորձի կիրառման օրինակների վերաբերյալ: Առաջարկվեց համայնքապետերի համագործակցությունը ջրային և էներգետիկ ռեսուրսների արդյունավետ օգտագործման միջազգային փորձի շրջանակներում:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ՝

1.Ֆ և ՍՏԶ վարչության պետ Ն. ԳԱԼՍՏՅԱՆ

--- Հետևել հողի հարկի և գույքահարկի պարտքերի հավաքագրման գործընթացին,կազմել ժամանակացույց ըստ համայնքների և ներկայացնել տեղեկատվություն:

2. ՏԻՄ վարչության պետ՝ Ս. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

--- Կազմակերպել համայնքապետարաններում տեղեկատվական կենտրոնների ստեղծման գործընթացին:

---Ցանցը համալրել և միանալ Mulberry էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգին:
--- Նախապես ուղարկված ցուցակներում ընդգրկված զինապարտներին նշված օրերին թիվ 25651 զորամաս /ք.Աշտարակ,Գիտավան -1 / ներկայացնելու՝մեկօրյա պարապմունքներին ներգրավելու գործընթացը կազմակերպելու վերաբերյալ:

3.Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Յու. ԱԶԱՏՅԱՆԻՆ

--- Հետևել մարզին տրամադրված էլիտա և առաջնային վերարտադրության գարնանացան գարու և եգիպտացորենի սերմացուների գումարների վերադարձման ընթացքին՝ արագ ավարտել այդ գործընթացը:

---Համայնքապետերի հետ հստակեցնել մարզին հասանելիք պարարտանյութի և դիզելային վառելիքի պահանջարկի քանակի և դրա հետ կապված կազմակերպչական աշխատանքների համակարգումը:

4.Հողաշինության և հողօգտագործման բաժնի պետ Գ. ՕՀԱՆՅԱՆԻՆ

--- Կազմել հողերի վարձակալության ժամանակացույց՝համայնք առ համայնք և մեկամսյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

Ս.ՍԱՀԱԿՅԱՆ